ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» վարչության փորձագետ՝ Ռազմիկ Իսահակյանի, աշխատանքային գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

Վեց ամսյա տևողությամբ փորձաշրջանում իրականացրել է հետևյալ աշխատանքները. նախաձեռնել և իրականացրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության» կանոնադրության վերանայում, որի արդյունքում մշակվել և հաստատվել է վարչության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ: Մասնակցել է ՀՀ կառավարություն ներկայացվող «ՀՀ ԲՈՒՀ-երի զարգացում և միավորում» թեմայով սահիկաշարերի մշակման աշխատանքներին, բարձրագույն կրթության երրորդ մակարդակի՝ «ասպիրանտուրա», կրթության՝ «Կրեդիտային համակարգի բարեփոխման հայեցակարգ»-ի, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» նախագծի քննարկումներին և հանդես եկել նոր առաջարկություններով: Մասնակցել է «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիր»-ի օրենքի նախագծի քննարկումներին, «ՀՀ կրթության զարգացման ռազմավարական ծրագիր»-ի գործողությունների պլանի մշակման աշխատանքներին՝ կատարելով համապատասխան առաջարկություններ: Վերլուծել է «Կրթության ոլորտի բյուջետային ֆինանսավորումը ՀՀ-ում և օտարերկրյա երկրներում», հավաքագրել ՀՀ բարձրագույն կրթությանը և գիտությանը վերաբերող վիճակագրական տվյալներ, ներկայացրել վերլուծություն՝ հաշվետվության տեսքով: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության» բնականոն աշխատանքները արդյունավետ համակարգելու նպատակով՝ առաջարկել է աշխատակազմի կառավարման նոր ռազմավարություն:

«Բարձրագույն և հետբուհական
մասնագիտական կրթության վարչության» փորձագետ
Ռազմիկ Իսահակյան **7. դեկտեմբեր 2022թ.**